ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՄԻԱՑՅԱԼ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՇՐՋԱՆ
ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Ոստիկանապետի գրասենյակ
125 North Beaudry Avenue, Los Angeles, California 90012
Հեռախոս՝ (213) 202-4508 – Ֆաքս՝ (213) 202-8676

ԱԼԲԵՐՏՈ Մ. ԿԱՐՎԱԼՅՈՒ
Վերակացու

ՊԵԴՐՈ ՍԱԼՄԻԴՈ
ՓՈԽՎԵՐԱԿԱՑՈՒ

ՍՏԻՎԵՆ Կ. ԶԻՊՊԵՐՄԱՆ
Ոստիկանության պետ

ԹԵՄԱ՝ ԾՆՈՂԻ/ՕՐԻՆԱԿԱՆ ԽՆԱՄԱԿԱԼԻ ՕՐԻՆԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ՝ ՀՐԱԶԵՆ ԱՆՎՏԱՆԳ ՊԱՀԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հարգելի՛ ծնող/խնամակալ՝

Մեր աշակերտների և անձնակազմի համար անվտանգ կրթական միջավայրի ապահովումը մնում է մեր առաջնահերթություններից մեկը: Բոլորս տեղյակ ենք մեր հարևան համայնքներում և ամբողջ երկրի տարածքում զենքի բռնության դեպքերի մասին: Կալիֆորնիայում ամեն տարի 18 տարեկանից ցածր միջին հաշվով 27 երեխաներ ինքնասպանություն են գործում հրազենով, որը պատկանել է տանը գտնվող ինչ-որ մեկին: Հրազենային միջադեպերից մեծ մասի դեպքում անչափահասն օրինական գնված զենքը գտել է իրենց բնակավայրից կամ հարազատի բնակավայրից: Լոս Անջելեսի միացյալ շրջանը քայլեր է ձեռնարկում ՝ ապահովելու համար, որ դպրոցական կամպուսներն ապահով լինեն զենքի բռնության սպառնալիքից: Որևէ աշակերտի մոտ հրազեն հայտնաբերելու դեպքում նա անմիջապես կենթարկվի ձերբակալման, ժամանակավոր հեռացման տակ կդրվի և կառաջարկվի նրան վտարել դպրոցից: Աշակերտներին հրազենից պաշտպանելու մեր ջանքերին նպաստելու համար և որպես հարգանք մեր ընտանիքների հանդեպ՝ Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում զենքն անփույթ պահելուց անչափահասներին պաշտպանելու իրավական պարտավորությունները: Ստորև ներկայացված են զենքը պահելու մասին օրենքներից երկուսը.

ԶԵՌՔԻ ՀՐԱԶԵՆ ԱՆՎՏԱՆԳ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ, ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 55.21 ԲԱԺԻՆ
Զեռքի հրազենն ապահով պահելու մասին օրենք, Լոս Անջելեսի քաղաքային օրենսգրքի 55.21 բաժին Լոս Անջելես քաղաքի այս օրենքը հանցագործություն է համարում բնակավայրում հրազեն ունենալը, եթե այն փակի տակ պահված չէ, կամ, եթե Կալիֆորնիայի Արդարադատության դեպարտամենտի կողմից հաստատված ձգանի կողպեքը վնասված է:

ՀՐԱԶԵՆԻ ՀԱՆՑԱՎՈՐ ՊԱՀՈՒՄ, Կալիֆորնիայի քրեական օրենսգրքի բաժին 25100(A)
Այս օրենքը քրեականացնում է լիցքավորված զենքը Ձեր կողմից վերահսկվող ցանկացած տարածքում պահելը ՝ իմանալով կամ ողջամտորեն պարտավոր լինելով իմանալ, որ երեխան, ամենայն հավանականությամբ, կարող է գտնել այն, և երեխային հասանելի է դառնում զենքը՝ մահվան կամ լուրջ մարմնական վնասվածքի պատճառ դառնալով:

Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք կարդալ վերոնշյալ օրենքների ամբողջական տեքստը:

Հարգանքով ձեր,

Ստիվեն Կ. Զիպպերման
Ոստիկանության պետ

---------- **ԿՏՐԵՔ ԱՅՍՏԵՂ ԵՎ ՎԵՐԱԴԱՐՁՐՈՒ ՁԵՐ ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆԻՆ** ----------

ՀՐԱԶԵՆԻ ԱՆՎՏԱՆԳ ՊԱՀՈՒՄ – ՀԱՍՏԱՏՄԱՆ ՁԵՎԱԹՈՒՂԹ 2023-2024

Խնդրում ենք ստորագրել ստորև՝ հաստատելով այս տեղեկատվության ստացումը:

Աշակերտի անունը (տպագիր)՝ _____

Ծնողի/օրինական խնամակալի անունը (տպագիր) ՝ _____

Ծնողի/օրինական խնամակալի ստորագրությունը՝ _____ Ամսաթիվ՝ _____